ԵՄԵՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ 1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Վ. Ս. ԱՎԱԳՅԱՆ

1970-ական թվականների վերջին—1980-ական թվականների սկզբին ԵԱՀ-ի արտաքին քաղաքական կուրսը հիմնականում բնորոշվում է երկրում իր իշխանությունն ըստ ամենայնի ամրապնդելու համար առկա բոլոր հնարավորություններն օգտագործելու՝ բնույթով ազգայնական կառավարող վարչակարգի ձգտումը։ Այս կապակցությամբ առանձնակի տեղ է հատկացվում ԵԱՀ-ի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելուն։ Ղեկավարությունը գիտակցում է առանց արտաքին օգնության ԵԱՀ-ի տնտեսական հետամնացությունը հաղթահարելու անհնարինությունը։ Այս հանգամանքը պայմանավորում է արտաքին քաղաքական կապերի նկատմամբ ԵԱՀ-ի ղեկավարների պրագմատիկ և հաշվեկշիռ մոտեցման միտումը։ Վերջին ժամանակներս նկատվում է կապիտալիստական առաջատար պետություններից երկրի առևտրատնտեսական և ֆինանսական կախման ուժեղացում, որի պատճառը երկրի վալյուտատնտեսական ծանր վիճակն ու տնտեսության կրած լուրջ դժվարություններն են։

Սակայն վարչակարգի բնույթը, ինչպես չմիանալու շարժման շրջանակներում, այնպես էլ արաբական աշխարհում հակաիմպերիալիստական հիմքի վրա իր միջազգային հեղինակությունն ամրապնդելու նրա ձգտումը և Սովետական Միության հետ ավանդական կապերը ԵԱՀ-ին պահում են դրական չեզոքության դիրքերում ու նրան թույլ չեն տալիս հեռանալու Արևելքի և Արևմուտքի հարաբերություններում հաշվեկշիռ քաղաքականության սկզբունքներից։ Դրա հաստատումն է ԵԱՀ-ի պրեզիդենտ Ա. Ա. Սալեհի հետևյալ արտահայտությունը. «ԵԱՀ-ը մի պետության հետ իր հարաբերությունները չի կառուցում մյուսի հաշվին։ ԵԱՀ-ն այն երկրներից է, որոնք գիտակցում են մեծ տերությունների հետ հարաբերությունների նկատմամբ հաշվեկշիռ մոտեցման կարևորությունը... Նման քաղաքականությունը համապատասխանում է Եմենի ժողովրդի շահերին և արտահայտում նրա կամքն ու ցանկությունը՝ շարունակելու անկախ արտաքին քաղաքական կուրսը»[1]։

ԵԱՀ-ի ստրատեգիապես կարևոր աշխարհագրական դիրքը, որը վերահսկում է Պարսից ծոցի երկրների, Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ-ի համար կենսականորեն կարևոր նավթային երակի՝ Կարմիր ծովի մուտքը, մեծապես որոշում է ԵԱՀ-ի նշանակությունը մերձավորարևելյան ռեգիոնին վերաբերող հարցերի լուծման գործում։

Միջազգային ասպարեզում հանդես գալով հակաիմպերիալիստական դիրքերից և պաշտպանելով սպառազինությունների մրցավազքի դադարեցման նախաձեռնությունը, ԵԱՀ-ն իր սկզբունքային վերաբերմունքն է արտահայտում մերձավորարևելյան պրոբլեմների լուծման նկատմամբ։ Քուվեյթի «Ալ Ռայ ալ Ամ» թերթում 1984 թ. ապրիլին տպագրված հարցազրույցում Ա. Ա. Սալեհը շարադրել է իր երկրի ղեկավարության մոտեցումը դրանցից մի քանիսի նկատմամբ։ Հավաստելով ԵԱՀ-ի դիրքորոշումն Արաբական պետությունների լիգայի շրջանակներում անվտանգության կոլեկտիվ միջոցառումների նկատմամբ, նա նշել է, որ «ԵԱՀ-ը հավատարիմ է ազգային պարտքին և արաբական որևէ երկրի դեմ ցանկացած ագրեսիա

---

[1] «Ալ Վաթան ալ Արաբի», IX. 1985։

նա դիտում է որպես ադրեսիա իր դեմ»[2]։ Այնուհետև պրեզիդենտն ընդգծել է, որ ԵԱՀ-ը հանգես է գալիս մերձավորարևելյան կոնֆլիկտի համապարփակ կարգավորման և շահագրգռված բոլոր կողմերի, այդ թվում ՍՍՀՄ-ի, մասնակցությամբ միջազգային կոնֆերանս գումարելու օգտին։

ԵԱՀ-ի սկզբունքայնության օրինակ է նրա դիրքորոշումն ի պաշտպանություն Պաղեստինի ազատագրության կազմակերպության։ 1985 թ. Սանայում իր ելույթներից մեկում ԵԱՀ-ի պրեզիդենտը տվեց Մերձավոր արևելքում տեղի ունեցող իրադարձությունների անաչառ գնահատականը, նշելով, որ «այժմ իրադրությունը բնորոշվում է արաբական երկրները այնպիսի պրոբլեմների հոսանքում խեղդելու տարբեր ուժերի ձգտմամբ, որոնք անլուծելի են թվում և ծագել են սկսած 1973 թվականից։ Դրա համար էլ անթույլատրելի է նրանց ներքաշել երկրորդական նոր պրոբլեմների մեջ, այլ անհրաժեշտ է դրանք համակողմանիորեն ուսումնասիրել և լուծել արաբական պետությունների ղեկավարների հանդիպումներում»[3]։

ԵԱՀ-ի արտաքին քաղաքականության ուղեծրի մեջ մտնում են քաղաքական տարբեր սիստեմների պատկանող, զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող պետություններ։ Սակայն նշանակության աստիճանով ԵԱՀ-ի համար այդ հարաբերություններն ամենևին էլ համարժեք չեն, որը մեծ մասամբ պայմանավորված է պատմական, իսկ վերջին տարիներին՝ նաև տնտեսական պատճառներով։

ԵԱՀ-ի հասարակական-քաղաքական կյանքի վրա Սաուդյան Արաբիայի ազդեցությունը, հատկապես 1962 թ. սեպտեմբերի հակամիապետական հեղափոխությունից հետո, բավական մեծ էր։ Բացի այդ, Սաուդյան Արաբիան ազդեցություն էր գործում ԵԱՀ-ի արտաքին քաղաքական կուրսի վրա, լինելով «գերիշխող ուժ, որը պայմանավորում է... Արևմուտքի հետ մերձեցումը, խանգարում սոցիալիստական երկրների հետ համագործակցությանը»[4]։ 1974 թ. ԵԱՀ-ում զինվորականների իշխանության գլուխ անցնելուց հետո, որոնք աստիճանաբար սկսեցին կենսագործել ներքաղաքական իրադրության կայունացման և ազգային անկախության ամրապնդման ինքնուրույն կուրս, Սաուդյան Արաբիայի և ԵԱՀ-ի ավանդաբար բարդ հարաբերությունները թևակոխեցին փոխադարձ անվստահության, տարաձայնությունների ու «ավանդական բարեկամությանը» ձևական նվիրվածության ժամանակաշրջան։ Այդ իրավիճակը Սաուդյան Արաբիային ստիպեց միջոցներ ձեռնարկել թերակղզու հարավում իր դիրքերի պահպանման համար, որոնց թուլացմանը նպաստել էր նաև ԵԺԴՀ-ի անկախության նվաճումը, նրա ժողովրդի կողմից զարգացման սոցիալիստական ուղու ընտրությունը։ Սաուդյան վարչակարգն անցավ ԵԱՀ-ի պահպանողական ուժերի (ֆեոդալական, ցեղային և կղերական վերնախավ, երկրի հյուսիսի և հյուսիս-արևելքի հակակառավարական և անջատական տրամադրություն ունեցող ցեղեր) ուղղակի պաշտպանությանը և աջ մուսուլմանական ընդդիմադիր ուժերի գործունեության խթանմանը։ Երկու երկրների հարաբերությունների վիճակը բնորոշող կարևորագույն գործոնն այն ֆինանսական ու տնտեսական օգնությունն է, որ Սաուդյան Արաբիան ցույց է տալիս ԵԱՀ-ին։ Երկրի կառավարող վարչակարգի դիրքերի ամրապնդումից Սաուդյան Արաբիայի դժգոհությունն արտահայտվեց նրանում, որ 1980-ական թվականների սկզբներին բացի ԵԱՀ-ի աջ ուժերի պաշտպանությունից, նրան ցույց տրվող ֆինանսական ու տնտեսական օգնությունը զգալիորեն կրճատվեց։

Արաբական թերակղզու հարավում առաջադիմական վարչակարգ ունեցող այնպիսի պետության գոյությունը, ինչպիսին Եմենի ժողովրդադեմոկ-

---

[2] «Ալ Ռայ ալ Ամ», Քուվեյթ. 10. IV. 1984։

[3] «Ասս Սաուրա», Սանա, 15. VII. 1985։

[4] Л. В. Валькова. Саудовская Аравия в международных отношениях, М., 1979, с. 147.

բատական հանրապետությունն է, իմպերիալիստական ուժերի կողմից դիտվում է որպես հարավ-արևմտյան Ասիայի այդ ստրատեգիական կարևոր շրջանում իրենց հեգեմոնիստական նկրտումների ճնշում։ Անմիջականորեն մասնակցելով այդ երիտասարդ հանրապետության դեմ քայքայիչ գործունեությանը, ԱՄՆ-ը արաբական հետադեմ վարչակարգերի, առաջին հերթին Սաուդյան Արաբիայի հետ ձգտում է այդ գործունեության մեջ ներքաշել ռեգիոնի այլ երկրներ, այդ թվում ԵԱՀ-ին։ Սակայն 1980-ական թվականների սկզբներին դրվեցին եմենյան երկու պետությունների միավորման պրոցեսի հիմքերը, ինչը ապահովում է անհրաժեշտ կայունությունը ռեգիոնում։ Միասնության հասնելու երկու երկրների ձգտումը նախ և առաջ վերածվում է մի գործունեության, որը նպատակամղված է արտաքին ճնշման պայմաններում նրանց քաղաքական անկախության երաշխիքների ապահովմանը։ 1980-ական թվականների առաջին կեսին միավորման պրոցեսի հունով իրականացվող միջոցառումներն ակտիվ և ցուցադրական բնույթ ստացան։ «Մոնդ» թերթը 1985 թ. դրել է, որ ԵԱՀ-ի և ԵԺԴՀ-ի ղեկավարները կարողացել են նդհանուր լեզու գտնել ի հեճուկս Սաուդյան Արաբիայի, և, թեև, խոսքն առայժմ լիակատար միավորման մասին չէ, ղեկավարների կանոնավոր հանդիպումներն ու բազմակողմանի համագործակցությունը վկայում են նրանց ամրապնդվող կապերի մասին[5]։ «Դրա հետ մեկտեղ,— նշում է «Միդլ իստ» հանդեսը,— երկու վարչակարգերն էապես տարբերվում են միմյանցից, ինչպես մեր քաղաքական կառուցվածքի, այնպես էլ արտաքին քաղաքական ուղղության տեսակետից։ Հետևաբար, խաղաղ գոյակցությունն ու եմենցիների եղբայրական զգացմունքներին ուղղված կոչերն այն ամենն է, ինչի հույս այսօր կարելի է ունենալ»[6]։

Միջեմենյան հարաբերությունների առաջընթաց զարգացումը բնական անհանգստություն է պատճառում իմպերիալիստական պետություններին և Սաուդյան Արաբիային, քանի որ, ինչպես գտնում է «Նյուսուիկ» հանդեսը, «Արաբական թերակղզու հարավում, ի դեմս միասնական Եմենի, ռազմական ու քաղաքական լուրջ ուժի գոյացման սպառնալիք է ծագում»[7]։ Արևմտյան ու սաուդյան քաղաքագետներն այդ ռեգիոնում տիրող իրադրության կայունացման որոշակի հույսեր էին կապում ԵԺԴՀ-ում 1986 թ. հունվարին տեղի ունեցած իրադարձությունների հետ, որտեղ ներքին տարաձայնությունները հանգեցրին հակամարտ կողմերի կատաղի և արյունահեղ ընդհարման։ Դա զգուշավորությամբ ընդունվեց ԵԱՀ-ի ղեկավարության կողմից։ Ստեղծված իրավիճակի սթափ գնահատման շնորհիվ ԵԱՀ-ն ընդունեց ԵԺԴՀ-ի ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների վրա հիմնված դիրքորոշում։ ԵԺԴՀ-ի իրադարձությունները բնութագրելով որպես «ներեմենյան պրոբլեմ», Ա. Ա. Սալեհը պաշտպանեց արաբական ընկերակցության գործողությունները կոորդինացնելու իր իրավունքը, դրանք նպատակամղելով կոնֆլիկտը ԵԺԴՀ-ի ներսում տեղայնացնելուն։ 1986 թ. փետրվարի 25-ին ԵԱՀ-ի պրեմիեր մինիստր Ա. Ա. Ղանին Սանայում, հանդես դալով ոստիկանական կրտսեր սպայական անձնակազմի առջև, հայտարարեց, որ կառավարությունն առաջվա նման հետևում է Եմենի միավորման կուրսին և ԵԺԴՀ-ի նոր ղեկավարության հետ կշարունակի գործունեությունն այդ ուղղությամբ[8]։

ԵԱՀ-ում տեղի ունեցող առաջադիմական փոփոխությունների նկատմամբ Սաուդյան Արաբիայի բացասական դիրքի և այդ պատճառով հրկրին ցույց տրվող նրա ֆինանսական ու տնտեսական օգնության զգալի կրճատման հետևանքով ԵԱՀ-ը հարկադրված է օգնության նոր աղբյուրներ որոնել ի դեմս Պարսից ծոցի երկրների, Իրաքի, Լիբիայի և այլոց, որոնց կառավարությունները նույնպես մի շարք պահանջներ են ներկայացնում։

---

[5] „Le Mond", Paris, 26. VIII. 1985.

[6] „Middle East", London, 7. V. 1984.

[7] „Newsweek", New York, 7. V. 1985.

[8] «Ան Սաուրա», Սանա, 26. II. 1986։

Հետհեղափոխական առաջին տարիների և քաղաքացիական պատերազմի շրջանում ԵԱՀ-ի արտաքին քաղաքական կապերի մեջ գլխադաս տեղը նշանակվում էր Եգիպտոսը, որը ժամանակին ռազմական ու տնտեսական վարնակալի օժանդակություն էր ցույց տվել երիտասարդ հանրապետական վարչակարգին։ 1970-ական թվականների վերջերին Եգիպտոսի, Իսրայելի և ԱՄՆ-ի կողմից Քեմպ Դևիդի համաձայնագրի ստորագրումից հետո ՕԱՀ-ը սրացավ Եգիպտոսի համաարաբական բոյկոտին։ Սակայն պրեզիդենտ Հ. Մուբարաքի իշխանության գլուխ անցնելով Եգիպտոսի արտաքին քաղաքական կուրսի որոշ փոփոխումից հետո ԵԱՀ-ը արաբական երկրներից առաջինը վերականգնեց դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի հետ։ Իր ելույթներում Ա. Ա. Սալեհը բազմիցս ընդգծել է, որ եմենցիները երբեք չեն մոռանա այն օգնությունը, որ ցույց էր տալիս եգիպտական ժողովուրդը իրենց՝ քաղաքացիական պատերազմի և արտաքին մեկուսացման դժնդակ տարիներին։

ԵԱՀ-ն ակտիվորեն մասնակցում է Արաբական պետությունների լիգայի գործունեությանը և, մասնավորապես, իրանա-իրաքյան կոնֆլիկտի կարգավորմամբ զբաղվող, այսպես կոչված, «յոթի կոմիտեի» աշխատանքին։ 1984 թ. դեկտեմբերին Սանայում Իսլամական կոնֆերանսի կազմակերպության կոնգրեսի աշխատանքի ընթացքում Ա. Ա. Սալեհը, ձգտելով գտնել հաշտեցման ուղիներ, հանդիպումներ ունեցավ Իրաքի և Իրանի արտաքին գործերի մինիստրների հետ։ ԵԱՀ-ի մայրաքաղաքում կոնգրեսն անցկացնելու բուն փաստն արաբական աշխարհում երկրի բարձրացող հեղինակության վկայությունը եղավ։

1984 թ. ԵԱՀ-ում նավթի պաշարների հայտնաբերումից հետո Արևմուտքի մասսայական ինֆորմացիայի միջոցները սկսեցին այն ենթադրություններն անել, թե այդ հանգամանքը կարող է անդրադառնալ կառավարության վարած արտաքին քաղաքական կուրսի վրա։ Սակայն «Ասս Սահվա» թերթում 1985 թ. հունիսի 8-ին տպագրված հարցազրույցում Ա. Ա. Սալեհը հայտարարել է. «Ո՛չ նավթը, ոչ էլ որևէ այլ հարստություն չի կարող ազդել մեր երկրի արտաքին քաղաքականության վրա»[9]։

Ա. Ա. Սալեհի օրոք զգալիորեն մեծացավ ԵԱՀ-ի դերը չմիանալու շարժման մեջ։ Արդի միջազգային կյանքում շատ պրոբլեմների վերաբերյալ ԵԱՀ-ի դիրքորոշումը մեծապես զուգադիպում է կամ մոտ է չմիացած երկրների մեծամասնության դիրքորոշմանը։ Վերջին տարիներին դրանք ընդունեցին ցայտուն արտահայտված հակաիմպերիալիստական բնույթ։ Դրա հետ մեկտեղ, այդ շարժման մեջ ԵԱՀ-ի ակտիվությունը մեծապես պայմանավորված է նրա ղեկավարության ձգտմամբ՝ ըստ հնարավորին ընդլայնել ֆինանսական և տնտեսական օգնություն ստանալու աղբյուրները, այդ թվում զարգացող ոչ արաբական պետություններից։

Նավթ արդյունահանող երկրների օգնությունը հաճախ ուղեկցվում է քաղաքական պահանջներով։ Դա ԵԱՀ-ի կառավարությանը հարկադրում է կոնտակտներ որոնել արևմտյան երկրների, եվրոպական ու ամերիկյան ընկերությունների և կազմակերպությունների հետ, որոնց աջակցությունը տնտեսական, ֆինանսական և տեխնիկական ասպարեզներում չափազանց ակընհայտ քաղաքական ուղղվածություն չունի։

Ամերիկայի Միացյալ Նահանգները ԵԱՀ-ը ճանաչեցին 1962 թ. սեպտեմբերյան հեղափոխությունից երկու ամիս անց, որը դրականորեն անդրադարձավ միջազգային ասպարեզում երկրի նոր ղեկավարության դիրքերի ամրապնդման վրա։ Այնուհանդերձ, ԵԱՀ-ի ղեկավարությունը ԱՄՆ-ի հետ հարաբերություններում հետևում էր զգույշ ու ճկուն տակտիկայի, որը նրպատակամղված էր այդ հզոր պարտնյորին որոշակի տարածության վրա պահելուն, որպեսզի նրան ո՛չ խրտնեցնի, ո՛չ էլ այնքան մոտեցնի, որ ընկնի

---

9 «Ասս Սահվա», 9. VI, 1985.

նրա ազդեցության տակ և տնտեսական ու քաղաքական կախում ունենա նրանից։ ԵԱՀ-ի նկատմամբ ԱՄՆ-ի մեծացող հետաքրքրության պայմաններում Ա. Ա. Սալեհին հաջողվում է հավատարիմ մնալ դրական չեզոքության և չմիանալու քաղաքականությանը։ Նման կուրսի արտահայտություն էր 1986 թ. ապրիլին ԱՄՆ-ի փոխպրեզիդենտ Ջ. Բուշի ԵԱՀ կատարած այցը։ Բանակցությունների ընթացքում ամերիկյան կողմը փորձեց շոշափել ԵԺԴՀ-ի ներքին գործերին հնարավոր միջամտության ուղիները։ ԵԱՀ-ի պրեզիդենտը, հանդես բերելով հաստատակամություն, ԵԺԴՀ-ի իրադրությունը բնորոշեց որպես այդ պետության ներքին պրոբլեմ։ Դատապարտելով իրան-իրաքյան պատերազմի շարունակումը, որը սպառնալիք է ռեգիոնի անվտանգությանը, կողմերը Մերձավոր արևելքի իրադրությանը վերաբերող մի շարք հարցերում հանդես բերեցին հայացքների տարբերություն։ ԵԱՀ-ի ղեկավարը ձեռնպահ մնաց ԱՄՆ-ի հովանու ներքո Պարսից ծոցի գոտում կոլեկտիվ անվտանգության համակարգ ստեղծելու օգտին արտահայտվելուց։ Միևնույն ժամանակ, նա Միացյալ Նահանգների փոխպրեզիդենտին ծանոթացրեց շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ միջազգային կոնֆերանս գումարելու միջոցով պաղեստինյան պրոբլեմն արդարացիորեն կարգավորելու ԵԱՀ-ի դիրքորոշմանը։ Հանդիպման ժամանակ ընդգծվեց, որ ԵԱՀ-ը վճռականորեն դատապարտում է ամերիկյան ակտն ընդդեմ Լիբիայի, որը վատացրեց արաբական երկրների բնակչության վերաբերմունքն ԱՄՆ-ի նկատմամբ։

1980-ական թվականներին ակտիվացան ԵԱՀ-ի հարաբերությունները զարգացած կապիտալիստական մյուս պետությունների հետ։ Ներկայումս ԵԱՀ-ը զարգացնում է տնտեսական համագործակցությունը ԳՖՀ-ի հետ, որն իր օգնությունը քաղաքական որևէ պայմանի հետ չի կապում։ 1984 և 1986 թթ. Ա. Ա. Սալեհն այցելեց ԳՖՀ և բանակցություններ վարեց կանցլեր Հ. Կոլի հետ։

1984 թ. Ա. Ա. Սալեհն այցելեց Ֆրանսիա, որտեղ հանդիպում ունեցավ պրեզիդենտ Ֆ. Միտերանի հետ։ Բանակցությունների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց երկու երկրների տնտեսական, ինչպես նաև ռազմական համագործակցության ընդլայնման վերաբերյալ։

1980-ական թվականների առաջին կեսին ընդլայնվեցին ԵԱՀ-ի տնտեսական կապերը Մեծ Բրիտանիայի, Հոլանդիայի, վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի, միջազգային վայրուտային ֆոնդի և այլոց հետ։ Մասնավոր ձեռնարկության արագ ու լայն զարգացման համար ԵԱՀ-ում եղած պայմանները և օտարերկրյա կապիտալի ներգրավումը նպաստավոր նախադրյալներ են ստեղծում հանրային արտադրության համակարգում կապիտալիստական հարաբերությունների գերակշռության համար։ Դրա հետ մեկտեղ, տնտեսական օգնության աղբյուրների ճյուղավորման կուրսը ԵԱՀ-ին զսպում է դեպի Արևմուտք միակողմանի կողմնորոշումից։

Սոցիալիստական երկրների և, առաջին հերթին, Սովետական Միության հետ ԵԱՀ-ի հարաբերությունները վաղեմի պատմություն ունեն։ Սեպտեմբերյան հեղափոխության հաղթանակից և միապետության տապալումից հետո երիտասարդ հանրապետությունը ճանաչվեց սոցիալիստական բոլոր պետությունների կողմից։ 1964 թ. մարտի 21-ին պայմանագիր ստորագրվեց ՍՍՀՄ-ի ու ԵԱՀ-ի միջև՝ բարեկամության և տնտեսական ու տեխնիկական փոխօգնություն ցույց տալու մասին։ Առևտրական համաձայնագրեր ստորագրվեցին Չեխոսլովակիայի, Ռումինիայի, Հունգարիայի և ԳԴՀ-ի հետ։ 1970—80-ական թվականների սահմանագծին ԵԱՀ-ի ղեկավարությունը սկսեց առանձնակի ուշադրություն նվիրել ՍՍՀՄ-ի հետ համագործակցության ընդլայնմանը նախ և առաջ ռազմական բնագավառում, որը նպաստում է երկրի պաշտպանական հզորության ամրապնդմանը։ Իսկ դա ազգային անկախության ու անվտանգության առավել ամուր երաշխիք է։ 1980-ական թվականների առաջին կեսին Ա. Ա. Սալեհը երկու անգամ (1981 և 1984 թթ.) պաշտոնական բարեկամական այցերով եղավ Սովետական Միությունում։ 1984 թ.

հոկտեմբերի 10-ին Մոսկվայում 20 տարի ժամկետով բարեկամության ու համագործակցության պայմանագիր ստորագրվեց ՍՍՀՄ-ի ու ՕԱՀ-ի միջև։ Կրեմլում ԵԱՀ-ի պատվիրակության պատվին տրված ճաշկերույթի ժամանակ Ա. Ա. Սալեհն ասաց. «Մենք ձգտում ենք Սովետական Միության գերի ընդլայնմանն այն նախագծերի իրականացման գործում, որոնք նախատեսված են ներտնտեսական զարգացման պլաններով։ Հույս ունենք, որ ներկա այցը նոր ազդակ կհաղորդի մեր երկու երկրների լավ հարաբերությունների ու համագործակցության զարգացմանը, առաջընթաց քայլ կլինի այդ ճանապարհին և ամուր քար եմենա-սովետական բարեկամության մեծ շենքի պատին»[10]։ Ֆրանսիական «Մոնդ» թերթը և Արևմուտքի մասսայական ինֆորմացիայի միջոցները սովետա-հյուսիսեմենյան պայմանագրի ստորագրումը բնորոշեցին որպես ամերիկա-սաուդյան ճնշմանը դիմակայելու Ա. Ա. Սալեհի փորձ[11]։ Միևնույն ժամանակ ամերիկյան «Վաշինգտոն պոստը» սովետա-հյուսիսեմենյան հարաբերություններն անվանեց «ետնամուտք ՍՍՀՄ-ի և Սաուդյան Արաբիայի միջև կապեր հաստատելու համար»[12]։ 1986 թ. իր աշխատանքը սկսեց ՍՍՀՄ-ի և ԵԱՀ-ի միջև տնտեսական ու տեխնիկական համագործակցության և առևտրի միջկառավարական մշտական հանձնաժողովը։

Պետք է նշել, որ սոցիալիստական երկրների հետ ԵԱՀ-ի հարաբերությունները բարդ բնույթ են կրում։ Արևմուտքից երկրի առևտրատնտեսական կախման ուժեղացումը, ղեկավարության հակակոմունիստական բնույթի նախապաշարումները, ինչպես նաև ՍՍՀՄ-ի նկատմամբ ներքին և արտաքին թշնամական ուժերի ակտիվացումը կարող են անդրադառնալ այդ հարաբերությունների վիճակի ու զարգացման վրա։

Ներկայումս իր արտաքին քաղաքական կուրսը մշակելիս ԵԱՀ-ը արաբական երկրների մեծամասնության նման ձգտում է հետևել դրական չեզոքության և շմիանալու սկզբունքներին։ 1984 թ. հոկտեմբերի 10-ին Մոսկվայում կայացած ընդունելության ժամանակ Ա. Ա. Սալեհը հայտարարեց. «Եմենի Արաբական Հանրապետությունը, առաջնորդվելով իր վարած շմիանալու քաղաքականության սկզբունքներով, այսուհետև ևս կմերժի ռազմական բլոկների ու դաշինքների, ռազմական բազաների ստեղծման քաղաքականությունը, կպաշտպանի այն բոլոր ջանքերը, որոնք նպատակամղված են շմիանալու շարժման ամրապնդմանը և միջազգային ասպարեզում նրա դերի արդյունավետության բարձրացմանը, քանի որ այդ շարժումը դեմոկրատիզմի լիցք է մուծում միջազգային հարաբերությունների մեջ և ակտիվորեն նպաստում է միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանը։

Ամենայն պատասխանատվությամբ, որպես շմիացած պետություն, մենք հանդես ենք գալիս ի պաշտպանություն այնպիսի գործողությունների, որոնց նպատակն է փոփոխել գոյություն ունեցող միջազգային տնտեսակարգը և միջազգային տնտեսական հարաբերությունների բնույթը, որպեսզի զարգացող երկրների ժողովուրդները կարողանան իրականացնել իրենց իղձերն ու ձգտումները՝ զարգացման և առաջադիմության ասպարեզում»[13]։

Պրեզիդենտ Ա. Ա. Սալեհի գլխավորած ԵԱՀ-ի ներկա ղեկավարության արտաքին քաղաքական կուրսը կարևոր դեր է խաղում կառավարող վարչակարգի դիրքերի ամրապնդման գործում։ Քաղաքական անկախության հասնելու ջանքերը, դրական չեզոքությունը, հակաիմպերիալիստական ուղղվածությունը նպաստում են ժողովրդական զանգվածների մեջ Ա. Ա. Սալեհի հեղինակության ամրապնդմանը, հնարավորություն տալիս ուշադրությունն ու ռեսուրսները կենտրոնացնելու երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նախագծերի իրականացման վրա։

---

10 «Известия», 11. X. 1984.

11 „Le Mond", 26. II. 1985.

12 „Washington Post", 11. X. 1984.

13 «Известия», 11. X. 1984.

ВНЕШНЕПОЛИТИЧЕСКИЙ КУРС ЙЕМЕНСКОЙ АРАБСКОЙ РЕСПУБЛИКИ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ 1980-ых годов

В. С. АВАКЯН

Резюме

В конце 70-х—начале 80-х гг. внешнеполитический курс ЙАР в основном определялся стремлением националистического по своей природе правящего режима использовать все имеющиеся средства и возможности для всемерного укрепления своей власти в стране. Особое место в этой связи отводилось и отводится ускорению социально-экономического развития ЙАР. Руководство осознает невозможность преодоления экономической отсталости ЙАР в современных условиях без внешней помощи. Это обстоятельство обусловливает тенденцию прагматического и сбалансированного подхода йеменских лидеров к своим внешнеполитическим связям. В последнее время наблюдается усиление торгово-экономической и финансовой зависимости ЙАР от ведущих капиталистических стран. Однако характер режима, его стремление к укреплению своего международного авторитета как в рамках движения неприсоединения, так и в арабском мире на антиимпериалистической основе, традиционные связи с Советским Союзом удерживают ЙАР на позициях позитивного нейтралитета и не позволяют ей отойти от принципов сбалансированной политики в отношениях с Востоком и Западом.